ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Քամալեանց Ս. Աստուած աղքատի կերպում. Զրոյց Թ. 1896.

Ժողովրդական աւանդութիւններից առած մի պատմութիւն է այս, որ իւր բարոյական իմաստի և հետաքրքրական բովանդակութեան շնորհիւ կարող է ճանաչուիլ, որպէս մի օգտակար գիրք մանաւանդ դպրոցական հասակի մանկանց համար.

Աշխատասէր հեղինակի ծանօթ ոճը, որ այնքան պարզ է և բուն ժողովրդական ոգի ունի, այս զրոյցն էլ միանգամայն մատչելի է դարձնում ամէն կարգի ընթերցողի համար. Եթէ նկատելու մի բան կայ այս գրքուկի մէջ, այդ այն է, որ հեղինակը փոքր ինչ աւելի տեղ է տալիս գաւառական դարձուածներին ու բառերին, քան այդ հարկաւոր է. պատմութիւնն էլ տեղ տեղ ձգձգուած է երևում.

—

Օ. Ի. Շմիդտ. Առաջին վիշտ. Թարգմ. ռուսերէնից. Թ. 1896.

«Առաջին վիշտը» մի համակրելի գաղափարով սրտաշարժ պատմութիւն է, որ նոյնպէս օգտակար ընթերցանելիք կարող է լինել մանուկների համար. Թարգմանութեան լեզուն ընդհանրապէս վատ չէ, թէպէտ տեղ տեղ անհարթ է և մի քանի նախադասութիւն գրեթէ անհասկանալի, որովհետև թարգմանութիւնը կատարուած է ստրկական հետևողութեամբ բնագրին.

—

Տարեցոյց Հայ—Ռումիներէն, պատկերազարդ. 1896. *խմբագրեալ ի տ. Ղևոնդ քահանայէ Փափազեան. Գալաց.*

—

Բացի օրացոյցների սովորական տեղեկութիւններից՝ այս տարեցոյցը, որ այս երկրորդ տարին է հրատարակուում, պարունակում է հետևեալ փոքրիկ յօդուածները, հայերէն և ռումիներէն լեզուներով. ա) Համառօտ գիտելիք ի վերայ տումարին հայոց. բ) Համառօտ նկարագիր Ս. Էջմիածնի. գ) Խրիմեան Հայրիկ (ոտանաւոր) և դ) Համառօտ վիճակացոյց ռումանահայոց.

Բացի տէրունական խիստ փոքրադիր պատկերներից՝ օրացոյցիս մէջ կան Ռումինիոյ Կարոլոս թագաւորի, Ս. Էջմիածնի և ազգիս Վեհափառ Հայրապետի պատկերները.

Օրացոյցի գինն է կէս ֆրանկ.

—

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Н. Я. Марръ.—Сказаніе о католикосѣ Петрѣ и ученомъ Іоаннѣ Казернѣ. 1895 С. П.

A. Carriere.—La Légende D'Abgar dans l'histoire D'Arménie de Moïse de Khoren. Paris 1895

ԼՈՒՄԱՅ. — *Գրական հանդէս. Գիրք առաջին* 1896. *յունուար.*

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ.—Հ. Գ. Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆ *Դրանսիլվանիոյ Հայոց մետրոպոլիսը կամ նկարագիր Գերլա Հայաքաղաքի ի գիր և ի պատկեր.* 1896 *Վիեննա.*

Կ. ՏԻՐԵԱՆ.—*Սև ծովու ռուսական եզերքը.* 1895.

Մ. Եպ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ. — *Արցախ. Բագու* 1895.

ԱԶԴ.

Խմբագրութիւնս հակառակ իւր ցանկութեան այս տարի ևս կարող չեղաւ Արարատն ուղղակի բաժանորդների հասցէին ուղարկել և համարները կրկին պիտի իւր գործակալների միջոցով հասցնէ բաժանորդներին։ Ստիպուած ենք խոստովանել, որ Արարատի բազմաթիւ բաժանորդներից և ոչոք չը փութաց իւր հասցէն խմբագրութեանս ուղարկելու, իսկ առանց մանրամասն հասցէի անհնար էր մեզ մեր խոստումը կատարել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳՐԻ 1896 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արարատը կը հրատարակուի նոյն ծրագրով և աւելի մեծ ծաւալով (3 *թերթ*).

Տարուայ վերջը բաժանորդները կստանան իբրև նուէր մի հարուստ ժողովածու 8—10 *թերթից բաղկացած.*

Արարատին բաժանորդ գրուողները դիմում են

Эчміадзинъ. Редакція жур. „АРАРАТ"

Տարեկան գին Ռուսաստան 4 *ռ.*

— — *արտասահման* 5 *ռ.*